ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ք. Երևան «11» սեպտեմբերի 2024թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 208-Ա/Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻԻ ԱՆՎԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ – ՎԳԱՀ – 2025» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հուլիսի 12-ի N 28-Լ հրամանի հավելվածի 18-րդ կետի 7-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի սեպտեմբերի 09-ի N 1698-Ա/2 հրամանը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Կազմակերպել «ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ – ՎԳԱՀ – 2025» մրցույթը (այսուհետ՝ Մրցույթ)՝

1) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) հանրային կապերի և տեղեկատվության բաժնին՝ ապահովել Մրցույթի հայտարարության հրապարակումը, Մրցույթի հրավերի փաթեթի և արդյունքների տեղադրումը Կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում.

2) Կոմիտեի բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչությանը՝

ա) ապահովել Մրցույթի հայտ ներկայացնողների համար խորհրդատվության տրամադրումը,

բ) կազմակերպել հայտերի թղթային տարբերակների ընդունումը,

գ) կազմակերպել Մրցույթի արդյունքում շահառու ճանաչված հայտատուների հետ պայմանագրերի կնքումը.

3) Կոմիտեի փորձաքննության և վերլուծությունների վարչությանը՝

ա) ապահովել Կոմիտեի հայտերի և հաշվետվությունների առցանց համակարգով Մրցույթի մասնակցության հայտերի ընդունումը,

բ) ապահովել Մրցույթին ներկայացված հայտերի գիտական փորձաքննության կազմակերպումը,

գ) ապահովել Մրցույթի արդյունքների վերաբերյալ հայտատուներին սահմանված կարգով իրազեկումը.

4) Կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին՝ սահմանված կարգով ապահովել Մրցույթին ներկայացված հայտերի գիտական փորձաքննությունն իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների տրամադրումը:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Ֆարմանյանին:

ՆԱԽԱԳԱՀ՝ ԱՐՏՈՒՐ ՄՈՎՍԻՍՅԱՆ

(պարտականությունները կատարող)